

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ*

Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	ՀՀ ք. Երևան
Տրամադրվող գումարի մեծությունը	նվազագույնը՝ 1 մլն ՀՀ դրամ, առավելագույնը՝ 7 մլն ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույքը	22%-24%
Վարկի ժամկետը	1. Արտասահմանյան՝ մինչև 10 տարվա արտադրության ավտոմեքենաների համար մինչև 60 ամիս 2. Ռուսաստանի Դաշնության՝ մինչև 5 տարվա արտադրության ավտոմեքենաների համար մինչև 36 ամիս
Վարկի գումարի և տոկոսագումարի մարումները	Վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցի համաձայն
Վարկային հաշվի սպասարկման և գումարի տրամադրման միջնորդավճարները	1. Վարկային հաշվի սպասարկման համար՝ միանվագ 25 հզ. ՀՀ դրամ և վարկի գումարի 2,5%-ի չափով՝ նվազագույնը՝ 30 հզ. ՀՀ դրամ 2. Վարկը կանխիկ տրամադրման դեպքում՝ 0,5%, անկանխիկ դեպքում՝ 0,3%
Վարկի մայր գումարի վաղաժամկետ մարման համար	Տուգանք չի կիրառվում
Վարկառուի այլ ծախսերը	Գրավի գնահատման, վերագնահատման, նոտարական, պետական գրանցման և ձևակերպման, ապահովագրական և դրանց հետ կապված ծախսեր
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները	Ձեռք բերվող ավտոմեքենա (ապահովվածության՝ գնահատված լուծարային արժեքի, առավելագույնը 60%-ի չափով), այլ գրավ, երաշխիք, երաշխավորություն, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	Մինչև 3 աշխատանքային օր
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տարեկան անվանական տոկոսադրույքով՝ վարկի մնացորդի դիմաց
Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վարկային պարտավորությունների խախտման յուրաքանչյուր դեպքի համար	Տուգանք՝ 30 հզ. ՀՀ դրամի չափով
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	Օրական՝ 0,5%
Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ	Օրական՝ 0,5%
Վարկառուի կողմից պահանջվող փաստաթղթերը	Համաձայն «Սպառողական վարկերի տրամադրման» կարգի հավելված 2-ի

- Վարկառուի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում վարկային կազմակերպությունն իրավունք ունի արտադատական կարգով բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա և իրացնել այն:
- Մեքենայի ապահովագրումը պարտադիր պայման է: